

ԵԹԵ ԶԵՐ
ԵՐԵԽԱՆ ԵՐԿՈՒ
ԼԵԶՈՒ Է
ՍՈՎՆՈՐՈՒՄ

Ծնողական ձեռնարկ
անգլերենը
որպես
երկրորդ լեզու
սովորող
աշակերտների
ուսումնական
հնարավորությունները
քարելավելու համար

ԵՐԿԼԵԶՎՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Ջորջ Վաշինգտոն համալսարանի, կրթության և մարդկային զարգացման դպրոցի, լեզուների և կրթության ուսումնասիրող կենտրոնի T295005001 պայմանագրի համաձայն, ԱՄՆ-ի լուսավորության նախարարության գրասենյակի երկլեզվյան կրթության և բնակչության փոփոխման լեզուների գործերի բաժինը (OBEMLA) ֆինանսավորում է երկլեզվյան կրթության կենտրոնական գրասենյակին (NCBE): Այս փաստաթուղթը պատրաստվել է EDOBEM-99-000011, Մոդել 9 հրամանագրի համաձայն: Այստեղ արտահայտված կարծիքները, եզրակացությունները և խորհուրդները կարող են Ջորջ Վաշինգտոն համալսարանի կամ լուսավորության նախարարության վերաբերմունքն ու կանոնները չարտահայտել, և պաշտոնական ոչ մի հաստատում չպետք է ենթադրել: Արտադրանքի անունների, առևտրական արտադրանքների կամ կազմակերպությունների ակնարկումը ԱՄՆ-ի կառավարության հաստատում չի նշանակում: Ընթերցողները, հրատարակման ընդունված չափանիշերի համաձայն, կարող են պատենտահանել և օգտագործել այս նյութերը: Վերարտադրման դեպքում, NCBE-ը համապատասխան վերագրում է պահանջում:

Գլխավոր ուսումնասիրող՝ Ջոել Գոմեզ, ED.D.
Տնօրեն՝ Միներվա Գորենա, Ed.D.

Ջորջ Վաշինգտոն համալսարան Վ Ա Շ Ի Ն Գ Տ Ո Ն

Կրթության և մարդկային
զարգացման դպրոց

Օգոստոս 2000

Եթե ձեր երեխան երկու լեզու է սովորում

Ծնողական ձեռնարկ
անգլերենը որպես երկրորդ լեզու սովորող
աշակերտների ուսումնական հնարավորությունները
բարելավելու համար


Նանսի Զելոսո
Բեթ Անթունեզ



Բ նվանդակություն

Բնվանդակություն

Նախաբան	5
Որո՞նք են երկու լեզու սովորելու առավելությունները:	9
Երկու լեզու սովորելու վերաբերյալ ի՞նչ են ցույց տալիս ուսումնասիրությունները:	11
Ծնողներն ինչպե՞ս կարող են որոշել թե արդյո՞ք դպրոցը բավարարում է իրենց երեխաների ուսումնական կարիքները:	13
Որո՞նք են անգլերեն սովորող աշակերտների համար արդյունավետ ուսումնասիրության յուրահատկությունները:	15
Դպրոցներն ինչպե՞ս են որոշում թե արդյո՞ք անգլերեն լեզու սովորող աշակերտները լեզվի տիրապետման համար հավելյալ օգնության կարիք ունեն:	17
Դպրոցներն ի՞նչ ծառայություններ են տրամադրում անգլերեն լեզու սովորող աշակերտներին:	19
Արդյո՞ք անգլերեն սովորող և անգլիախոս աշակերտներից ակնկալվող ուսումնական պահանջները նո՞ւյնն են:.....	23
Դպրոցում իրենց երեխաներին տրամադրվող ուսման որակը հսկելու համար ծնողներին օգնող դաշնակցային կանոններ՞ կան:	27
Ի՞նչ տարբերություն գոյություն ունի ԱՄՆ-ի և մյուս երկրների ուսումնական համակարգում:	29
Որտեղի՞ց կարող եմ լրացուցիչ տեղեկություններ ձեռք բերել:	31



Ամերիկայի Միացյալ
Նահանգներում բոլոր
երեխաները գերազանց
կրթություն ստանալու
իրավունք ունեն:



Ն ա խ ա ր ա ն

Ն ա խ ա ր ա ն

Ամերիկայի Միացյալ Նահանգներում, բոլոր երեխաները որակյալ կրթություն ստանալու իրավունք ունեն: Կրթություն ապահովելը դպրոցների պարտականությունն է, իսկ իրենց երեխաների կրթությանը վերաբերող հարցերի մասին տեղյակ լինելը և հասկանալը ծնողների իրավունքն ու պարտականությունն է:

[5]

ԱՄՆ-ի դպրոցներում արձանագրված աշակերտներից ավելի քան 10 միլիոնի մայրենի լեզուն անգլերեն չէ: Այս աշակերտները, որոնք հաճախ «լեզվի փոփոխման» պատկանող աշակերտներ են անվանվում, դպրոցի աշակերտության ամենաարագ աճող մասն է: Լեզվի փոփոխման պատկանող աշակերտները կարող են միայն իրենց մայրենի լեզվով կամ թե անգլերեն և թե մայրենի լեզվով խոսել: Ըստ Երկլեզվյան կրթության ազգային կենտրոնի տվյալների, մոտավորապես լեզվի փոփոխման պատկանող չորս միլիոն աշակերտ դեռևս բավականաչափ չեն տիրապետում անգլերեն լեզվին, որպեսզի կարողանան հաջողության հասնել միայն անգլերենով դասավանդվող դասարաններում: Շատ կրթաշրջաններում, այս աշակերտներին ֆանաչելու համար «անգլերեն լեզու սովորող» (ELL) տերմինն են օգտագործում: Դաշնակցային կանոնադրության մեջ այս աշակերտները «սահմանափակ անգլերեն իմացող» են համարվում:

Այս բրոշյուրը, երեխաների կրթության վերաբերյալ համապատասխան մոտեցումների մասին անգլերենը որպես երկրորդ լեզու սովորած կամ սովորող աշակերտների ծնողներին տեղեկություններ հաղորդելու համար է նախատեսված, որպեսզի դուք դպրոցի հետ աշխատելով, կարողանաք որակյալ կրթություն ապահովել ձեր երեխաների համար: Այս բրոշյուրի մեջ ֆննարկվող թեմաները, այնպիսի տեղեկություններ են հաղորդում, որոնք ազդում են ձեր երեխայի կրթության վրա: Քննարկվում են օրենքները, դպրոցի գործելակերպը և ELL աշակերտների կրթությանը վերաբերող ուսումնասիրությունները: Սա LEP աշակերտների կրթության ծրագիրը հասկանալու և աշխատանքներին մասնակցելու ուղղությամբ ձեզ օգնելու համար է նախատեսված: Որակյալ դպրոցի և տեղյակ ծնողների համագործակցության շնորհիվ, աշակերտները գերազանց կրթություն կստանան:



Ն ա խ ա ր ա ն

[6]

Յուրաֆանջյուր բաժին և բրոշյուրն ամբողջությամբ, ձեր երեխայի կրթության վերաբերյալ խելամիտ որոշումներ կայացնելու համար տեղեկություններ է տրամադրում: Հետևյալ հարցերն ամփոփում են այս բրոշյուրի տեղեկությունները:

◆ **Որո՞նք են երկու լեզու սովորելու**

առավելությունները: Այս բաժնում բացատրվում են մեկից ավելի լեզուներով կարդալու, գրելու և խոսելու տնտեսական, սոցիալական, իմացական և անձնական առավելությունները: Այս տեղեկությունները ձեր երեխայի երկլեզու լինելու և երկլեզվյան կրթություն ստանալու վերաբերյալ ճիշտ որոշում կայացնելու հնարավորություն է տալիս ձեզ:

◆ **Երկու լեզու սովորելու վերաբերյալ ի՞նչ են ցույց**

տալիս ուսումնասիրությունները: Լեզու սովորելը, ինչպես նաև կարդալու, մաթեմատիկայի և այլ հմտություններ ձեռք բերելը բարդ է: Այս բաժնում նշվում են այն տեղեկությունները, որոնք դուք պետք է իմանաք թե ձեր երեխան ինչպես է սովորում թե իր մայրենի լեզուն և թե անգլերենը և ինչպես են լեզուներ սովորելը ազդում նրա ուսման վրա:

◆ **Մեծողներն ինչպե՞ս կարող են որոշել թե արդյո՞ք դպրոցը բավարարում է իրենց երեխաների**

ուսումնական կարիքները: Այս բաժնում նշվում են այն վեց սկզբունքները, որոնք սահմանափակ անգլերեն իմացող աշակերտներ ունեցող դպրոցները կարող են և պետք է անեն ձեր երեխային բարձրորակ ուսում տալու համար: Դուք կարող եք ընթերցել այս բաժին և որոշել թե ձեր դպրոցը հետևում է այս սկզբունքներին:

◆ **Որո՞նք են անգլերեն սովորող աշակերտների համար արդյունավետ ուսումնառության**

յուրահասկությունները: Լավ դպրոցներն այնպիսի միջավայր են ստեղծում, որտեղ բոլոր աշակերտները, ներառյալ LEP աշակերտները կարող են սովորել և հաջողության հասնել: Այս բաժնում նշվում են դպրոցների այն առանձնահատկությունները, որոնք հաջողության հասնելու համար օգնում և ներառում են LEP աշակերտներին:



Նախարան

[7]

◆ **Դպրոցներն ինչպե՞ս են որոշում թե արդյո՞ք անգլերեն լեզու սովորող աշակերտները լեզվի տիրապետման համար հավելյալ օգնության կարիք ունեն:** Ինչպես երկրի կրթաշրջանները, LEP աշակերտներին օգնելու նպատակով տարբեր ծրագրեր են օգտագործում, այդպես էլ տարբեր միջոցներով որոշում են, թե աշակերտներն ինչքան են տիրապետում անգլերեն լեզվին, և որ ծրագրում պետք է տեղավորել նրանց: Կարևոր է, որ իմանա՞ք թե դպրոցներն ինչպես են գնահատում աշակերտների անգլերեն լեզվի հմտությունները, նրանց ամենաճիշտ ուսումնական ծրագրում տեղավորելու համար: Այս բաժնում բացատրվում է թե դպրոցները ինչպես են աշակերտներին մանաչում, գնահատում և համապատասխան ծրագրերում տեղավորում:

◆ **Դպրոցներն ի՞նչ ծառայություններ են տրամադրում անգլերեն սովորող աշակերտներին:** Ձեր երեխայի դպրոցը պետք է ձեր երեխայի, որպես երկրորդ լեզու սովորող աշակերտի, լեզվական և ուսումնական կարիքները բավարարող ծրագիր կիրառի: Այս բաժնում բացատրվում են յուրաքանչյուր ծրագրի առանձնահատկությունները, ինչպես նաև լեզվական և ուսումնական նպատակները: Այս բաժինը նաև ձեզ հնարավորություն է տալիս մանաչել անգլերենը որպես երկրորդ լեզու սովորող աշակերտներին օգնելու համար ձեր դպրոցի ընտրած ծրագիրը և այն համեմատել մյուս ծրագրերի առանձնահատկությունների ու նպատակների հետ: Եթե ձեր կրթաշրջանը մեկից ավելի ծրագրեր ունի, դուք իրավունք ունեք ընտրելու այն ծրագիրը, որը հավատացած եք, որ լավագույնս կօգնի ձեր երեխայի ուսումնական հաջողությանը:

◆ **Արդյո՞ք անգլերեն սովորող և քնիկ անգլիախոս աշակերտներից ակնկալվող ուսումնական պահանջները նույնն են:** Սովորելու չափանիշերը բարձր են բոլոր աշակերտների, ներառյալ անգլերեն լեզու սովորող աշակերտների համար: Չափանիշերը վերաբերում են այն ամենին, ինչ աշակերտները պետք է իմանան և իվիճակի լինեն կատարելու: Ձեր երեխայի դպրոցը պետք է դասավանդման և գնահատման համար չափանիշեր ունենա: Այս բաժնում

մեկնաբանվում են չափանիշերը, և թե ինչպես կարող եմ օգնել ձեր երեխաներին այս չափանիշերին տիրապետելու, ինչպես նաև այս չափանիշերի տիրապետման մակարդակը գնահատելու համար օգտագործվող ֆնկցիոնալ վերաբերյալ խնդիրները:

◆ **Դպրոցում իրենց երեխաներին տրամադրվող ուսման որակը հսկելու համար ծնողներին օգնող դաշնակցային կանոններ կա՞ն:** Այս բաժնում բացատրվում է թե դպրոցները, օրենքով ինչ պետք է տրամադրեն LEP աշակերտներին, որպեսզի համոզված լինեն, որ նրանք համահավասար և որակյալ կրթություն են ստանում:

[8] ◆ **Ի՞նչ տարբերություն գոյություն ունի ԱՄՆ-ի և մյուս երկրների ուսումնական համակարգում:** Այս բաժնում նշվում է ԱՄՆ-ի և մյուս երկրների ուսումնական համակարգերում գոյություն ունեցող հիմնական տարբերությունները: Այս տեղեկությունները կօգնեն ձեզ ավելի լավ հասկանալու և լավ փոխհարաբերություն ստեղծելու ձեր երեխայի դպրոց հետ:

◆ **Որտե՞ղից կարող եմ լրացուցիչ տեղեկություններ ձեռք բերել:** Այս բաժինը, ձեր երեխայի համար բաժնորակ կրթություն ապահովելու ուղությամբ ձեզ և ձեր երեխայի դպրոցին օգնող ազգային կազմակերպությունների մասին տեղեկություններ է տրամադրում:



Ն ախարան



Առավելություններ

Որո՞նք են երկու լեզու սովորելու առավելությունները:

Ամբողջ աշխարհում, մեկից ավելի լեզուներ իմանալը ոչ թե բացառություն, այլ նորմա է դարձել: Մոտավորապես, աշխարհի բնակչության կեսից-երկու երրորդը երկու լեզու գիտեն: Ժողովրդի մեծամասնությունն այնպիսի պայմաններում են ապրում, որտեղ սովորաբար երկու կամ ավելի լեզու է օգտագործվում:

Մեկից ավելի լեզուներ իմանալը, մի հմտություն է, որը պետք է գնահատել և խրախուսել: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մայրենի լեզվի զարգացումը ոչ թե խանգարում, այլ նպաստում է անգլերեն լեզու սովորելու պրոցեսին:

[9] Եթե ձեր երեխան մեկից ավելի լեզուներ գիտի, նա ունի անձնական, հասարակական, իմացական և տնտեսական այնպիսի առավելություններ, որոնք կշարունակվեն նրա ամբողջ կյանքում: Երկլեզու լինելու որոշ առավելություններն են՝

Ինտելեկտուալ՝ Աշակերտների իմացական զարգացումը չպետք է ընդհատվի: Երբ անգլերեն լեզվին չտիրապետող աշակերտները միայն անգլերեն են օգտագործում, նրանք ստիպված են լինում իրենց տարիքին համապատասխան ինտելեկտուալ մակարդակից ավելի ցածր մակարդակով աշխատել: Ուսումնական հաջողություն և իմացական զարգացում ապահովելու լավագույն միջոցն այն է, որ ծնողները և աշակերտները օգտագործեն այն լեզուն, որին լավ տիրապետում են:

Բացի դրանից, ուսումնասիրությունները ցույց են տալիս, մեկից ավելի լեզու իմանալն ընդարձակում է մարդու մտածելու ունակությունները: Երկլեզու երեխաների միտքն ավելի ճկուն է և այդ ունակություններն օգտագործում են մաթեմատիկական հասկացություններն, ինչպես նաև խնդիրները հասկանալու և լուծելու համար:

Կրթական՝ Այն աշակերտները, ովքեր անգլերեն սովորելով հանդերձ շարունակում են զարգացնել իրենց մայրենի լեզուն, ավելի լավ են աշխատում դպրոցում և ավելի լավ են անգլերեն սովորում քան այն աշակերտները, ովքեր անգլերեն լեզուն սովորում են իրենց մայրենի լեզուն կորցնելով:

Անճնական՝ Աշակերտի մայրենի լեզուն շատ կարևոր է նրա ինքնության համար: Մայրենի լեզվի զարգացումն օգնում է երեխային գնահատելու իր մշակույթն ու պատմությունը, որը բարձրացնում է նրա դրական ինքնագգացությունը:

Հասարակական՝ Մայրենի լեզվի պահպանումը կարևոր է ընտանեկան և այլ համայնքային կապերի պահպանման և զարգացման համար: Մայրենի լեզվի օգտագործումը խրախուսելով, դու՛ք ձեր երեխային նախապատրաստում ե՛ք բարեկամական և համայնքային հարաբերությունների համար ԱՄՆ-ում և համայն աշխարհում:

[10] **Տնտեսական՝** Երկլեզու աշխատուժի պահանջարկը մեծանում է ամբողջ աշխարհի մասշտաբով: Երկու կամ ավելի լեզուներով խոսելու, կարդալու և գրելու ունակությունը մեծ առավելություն է աշխատանքային ասպարեզում:



Առավելություններ

Երկու լեզու սովորելու վերաբերյալ ի՞նչ են ցույց տալիս ուսումնասիրությունները:

Բանավոր և գրավոր լեզվի միջոցով է գիտելիքները հաղորդվում տանը, դպրոցում և հասարակության մեջ: Ուստի, լեզուն ուսուցման կարևոր մասնիկն է դպրոցում: Հետազոտությունները լեզվի և սովորելու հարաբերության հետևյալ արդյունքներն են բացահայտում՝

Կան լեզվի ունակության տարբեր աստիճաններ՝ խոսակցական և դասարանում օգտագործվող:

[11]

Խոսակցական անգլերեն = բավականաչափ անգլերեն իմանալ բազմա ընկերք հետ, հարևանի հետ կամ խանութում դրամարկղի աշխատողի հետ հաղորդակցվելու համար: Դա հաճախ կոչվում է «գոյատևման անգլերեն»: Աշակերտները, հեռուստացույց դիտելով, ավագ ֆուլբ- եղբայրներին ունկնդրելով կամ ընկերների հետ խաղալով, սովորաբար մեկ կամ երկու տարում տիրապետում են այս հմտությանը:

Դասարանում օգտագործվող անգլերեն = լեզվական հմտություն, որն անհրաժեշտ է դասարանում և դասագրքերում օգտագործվող ուսումնական լեզուն հասկանալու և տերմիններն ու հասկացությունները սահամանելու համար: Դասարանում օգտագործվող անգլերեն լեզուն, որն ավելի բարդ է և վերացական, սովորում ենք ժամանակի ընթացքում: Համարյա թե, տեղեկությունը բացահայտող կոնտեքստային հուշումներ, ինչպես օրինակ՝ նկարներ, դեմֆի արտահայտություն, միմիկա, ձայնի տոնայնություն կամ ֆիզիկական լեզու (մարմնական շարժումներով արտահայտվել) չկան: Յուրաքանչյուր դասարանային մակարդակում, դասավանդման և դասագրքերի համար օգտագործվող լեզուն ավելի է դժվարանում, որը բարձր դասարանների LEP աշակերտների սովորելը ավելի դժվար է դարձնում:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հինգից յոթ տարի է հարկավոր դասարանում օգտագործվող անգլերեն լեզվին տիրապետելու համար: Դժբախտաբար, միայն խոսակցական լեզվի հմտությունների վրա հիմնվելով, շատ աշակերտներ ժամանակից ավելի շուտ են տեղափոխվում միայն անգլերենով դասավանդվող դասարաններ: Այնուամենայնիվ, առանց դասարանում օգտագործվող անգլերենին տիրապետելու, աշակերտները միայն անգլերեն լեզվով դասավանդվող դասարաններում ուսումնական դժվարության



Հետազոտություններ



| կհանդիպեն:

Առանց ուսուցման լեզուն հասկանալու աշակերտները չեն կարող սովորել:

Աշակերտները պետք է հասկանան իրենց լսած լեզուն: Եթե աշակերտն ուսուցչի ասածը չի հասկանում, ապա նա առարկան, ինչպես օրինակ՝ մաթեմատիկան, գիտությունը, հասարակական գիտելիքները չի հասկանա: Նմանապես, աշակերտին պարզապես միայն անգլերեն լեզվով դասավանդվող դասարանում տեղավորելով, անգլերեն չի կարողանա սովորել: Նոր լեզու սովորելու համար անհրաժեշտ է մայրենի լեզվի գիտելիքներ և ուսուցման որոշակի տեխնիկաներ:

[12]

Մայրենի լեզվի հմտություններն ու հասկացությունները փոխանցվում են երկրորդ լեզվին:

Երբ երեխան մի լեզվով կարդալ է սովորում, տպագիր տառերը կարդալու գիտելիքը փոխանցում է մեկ այլ լեզվի: Աշակերտի իմացած լեզվով կարդալ սովորելն ամենալավ և ամենահեշտ ձևն է, որովհետև աշակերտն երկու հմտություն (կարդալ և նոր լեզու սովորել) սովորելու փոխարեն կկենտրոնանա մեկ հմտություն (կարդալ) սովորելու վրա: Աշակերտները կարդալ վերասովորելու կարիք չունեն անգլերենում: Պարզապես, մեկ լեզվով սովորած հասկացությունները փոխանցվում են մյուս լեզվին: Երեխան միայն մեկ անգամ պետք է սովորի $2 \times 3 = 6$ -ի, այս գիտելիքը մեկ այլ լեզվի փոխանցելու համար նա միայն բառերը պետք է սովորի:



Հետազոտություններ

Ծնողներն ինչպե՞ս կարող են որոշել թե արդյո՞ք դպրոցը բավարարում է իրենց երեխաների ուսումնական կարիքները:

Ձորջ Վաշինգտոն համալսարանի կրթության հավասարության և գերազանցության կենտրոնը, վերջերս, անգլերենը որպես երկրորդ լեզու սովորող աշակերտներին համապատասխան կրթություն տալու ուղղությամբ դպրոցներին օգնելու նպատակով, մշակել է հետևյալ վեց առաջնորդող սկզբունքները: ԱՄՆ-ի լուսավորության նախարարությունն այս սկզբունքները մշակելու համար ֆոնդ է տրամադրել: Դուք նաև կարող եք հետևյալ սկզբունքներով ստուգել թե դպրոցն ինչպես է բավարարում աշակերտների ուսումնական կարիքները:

[13]

1. Դպրոցի չափանիշերը նույնն են քոլոր աշակերտների համար:
2. Դպրոցը ֆաշալերում է ձեր երեխային անգլերեն խոսելու, լսելու, կարդալու և գրելու հմտություններ գարգացնել: Դպրոցը նաև խրախուսում է ձեր երեխային, որ աշխատի անգլիախոս աշակերտների մակարդակով անգլերեն սովորել և միևնույն ժամանակ գարգացնել իր մայրենի լեզուն:
3. Դպրոցը ձեր երեխային և մյուս աշակերտներին նույն առարկաներն է առաջարկում:
4. Դպրոցը ձեր երեխայի նախադրյալների, մտածելու հմտությունների, մայրենի լեզվի իմացության և անգլերենի իմացության մակարդակի վրա հիմնվելով ուսումնական ծրագիր է առաջարկում ձեր երեխային:
5. Դպրոցն օգտագործում է չափանիշերի վրա հիմնված այնպիսի ֆնկցիոններ, որոնց մեջ նկատի են առնվում ձեր երեխայի լեզուն և մշակույթը:



Ուսումնական կարիքներ

6. Ձեր երեխայի ուսումնական հաջողությունը երեխայի, ծնողի, դպրոցի անձնակազմի և համայնքի համատեղ պարտականությունն է:

Այս առաջնորդող սկզբունքները կարող են ձեզ օգնել, որ ձեր երեխայի դպրոցի և առաջարկվող ուսումնական ծրագրերի մասին մտածեք: Նաև կարող են ձեր երեխայի ուսման աշխատանքները բարելավելու և դպրոցի վարիչներին խորհուրդ տալու ուղղությամբ ձեզ օգնել:

[14]



Ուսումնական կարիքներ



Որո՞նք են անգլերեն սովորող աշակերտների համար արդյունավետ ուսումնառության առանձնահատկությունները:

Ուսումնասիրություններն ի հայտ են բերել արդյունավետ ուսումնառության մի շարք առանձնահատկություններ, որոնք կարևոր են այնպիսի մի մթնոլորտ ստեղծելու համար, որտեղ բոլոր աշակերտները, ներառյալ անգլերեն լեզու սովորող աշակերտները կկարողանան սովորել ու հաջողության հասնել: Անգլերեն լեզու սովորող աշակերտները, անգլիախոս աշակերտների նման, ուսման մեջ հաջողության են հասնում, եթե օգնություն են ստանում և կարողանում են մասնակցել դպրոցական բոլոր աշխատանքներին:

[15]

Արդյունավետ կերպով աշխատող դպրոցները գնահատում են աշակերտների մայրենի լեզուն և մշակույթը:

Արդյունավետ կերպով աշխատող դպրոցների անձնակազմը գնահատում և հարգում է աշակերտների մայրենի լեզուն և մշակույթը: Անձնակազմի անդամները սովորում են կյանքի այն փորձառությունների մասին, որ աշակերտները ունեցել են իրենց հայրենիքում և Ամերիկայի համայնքներում, սովորում են աշակերտների մայրենի լեզուները և նրանց մշակույթը: Այսպիսի վերաբերմունքն աշակերտներին ցույց է տալիս, որ գնահատում և հարգում են իրենց:

Արդյունավետ կերպով աշխատող դպրոցները խրախուսում են ընտանիքներին, որ մասնակցեն իրենց երեխաների ուսումնառությանը:

Ընտանիքի ներառվածությունը ուսումնառության ամենակարևոր մասնիկն է բոլոր աշակերտների համար: Հաճախ, բազմաթիվ պատճառներով, LEP աշակերտների ծնողները չեն մասնակցում դպրոցական աշխատանքներին: LEP աշակերտների հետ արդյունավետ կերպով աշխատող դպրոցներն աշխատում են վերացնել դպրոցական աշխատանքներին մասնակցելու բոլոր խոչընդոտները ծնողների համար և ակտիվորեն խրախուսում և հարմարություններ են ստեղծում, որ ծնողները կարողանան մասնակցել իրենց երեխաների ուսումնառությանը:

Արդյունավետ կերպով աշխատող դպրոցները բարձր ակնկալիքներ ունեն բոլոր աշակերտներից, ներառյալ LEP աշակերտներից:

Արդեն որոշ ժամանակ է, որ ի հայտ է եկել բարձր ակնկալիքների կարևորությունը, թեև LEP աշակերտները հաճախ մտածում են, որ իրենցից ավելի քան է պահանջվում քան «հիմնական» դասարանի



Առանձնահատկություններ

աշակերտներից ակնկալվում է սովորել՝ բարձր մակարդակի աշխատանքներ հանձնարարելով և օգնելով: Այս դպրոցներն այնպիսի անձնակազմ է ընտրում, որը կարող է օրինակ հանդիսանալ, ծնողական աջակցությունը բարձրացնել և գնահատել աշակերտների լավ կատարած աշխատանքները:

Արդյունավետ կերպով աշխատող դպրոցներն օգնում են մայրենի լեզվի օգտագործմանը և զարգացմանը թե դասարանում և թե դասարանից դուրս:

Արդյունավետ կերպով աշխատող դպրոցները գնահատում են աշակերտների մայրենի լեզուն: Դպրոցները մայրենի լեզվի զարգացման համար կարող են պաշտոնական դասարանների միջոցով, ինչպես օրինակ՝ իսպանախոս աշակերտների համար իսպաներենի դասարաններ, կամ ուսուցչի օգնականներ, հասակակիցների օգնություն կամ համայնքային աղբյուրներ տրամադրելով: Արդյունավետ կերպով աշխատող դպրոցների անձնակազմն աշխատում է մայրենի լեզվի օգտագործմանը և զարգացմանը խրախուսող միջոցներ գտնել:

[16]

Արդյունավետ կերպով աշխատող դպրոցները LEP աշակերտներին օգնող և ներգրավող ծառայություններ և արտաժամյա աշխատանքներ են ծրագրում:

LEP աշակերտներից շատերը, իրենց լեզվական և ուսումնական հմտությունները զարգացնելու, դպրոցական համակարգի ակնկալիքները հասկանալու, դպրոցի և համայնքի անդամ զգալու համար հատուկ օգնության կարիք ունեն: Արդյունավետ կերպով աշխատող դպրոցներն այնպիսի ծրագրեր են առաջարկում, որոնք նպաստում են աշակերտների ուսումնական և հասարակական զարգացմանը և ընտելացմանը: Ուսմանը օժանդակող ծրագրերը ներառում են հասակակիցների օգնություն (tutoring), բազմամշակութային գիտակցություն, կուլեջի նախապատրաստական աշխատանքներ: LEP աշակերտներին ներգրավող արտաժամյա աշխատանքները ներառում են մշակութային խմբեր, որոնց անդամները սովորում են տարբեր մշակույթների մասին և ներկայացնում են նրանց արվեստն ու տոնական արարողությունները և երկլեզու աշակերտական լրագրեր:

Արդյունավետ կերպով աշխատող դպրոցները զարգացման համար համապատասխան ծրագրեր և նյութեր են օգտագործում:

Քանի որ, առանց ուսուցման լեզուն հասկանալու աշակերտները չեն կարող առարկաները սովորել, ուստի շատ կարևոր է, որ դպրոցներն աշակերտների լեզվական և ուսումնական ունակություններին համապատասխան դասագրքեր, կարդալու նյութեր, աշխատանքներ և տնային աշխատանքներ ապահովեն: Արդյունավետ կերպով աշխատող



Առանձնահատկություններ

դպրոցները LEP աշակերտների կարիքները բավարարելու համար
համապատասխան նյութեր և աշխատանքներ ունեն:

Դպրոցներն ինչպե՞ս են որոշում թե արդյո՞ք անգլերեն լեզու սովորող աշակերտները լեզվի տիրապետման համար հավելյալ օգնության կարիք ունեն:

Բոլոր կրթաշրջանները պետք է երկու կարևոր որոշում կայացնեն՝ 1) ինչպես պարզել, թե որ աշակերտներին պետք է գնահատել, և 2) ինչպես պետք է գնահատել այդ աշակերտների լեզվական հմտությունները, նրանց լեզվի իմացության մակարդակը որոշելու համար: Հանաչման և գնահատման մեթոդները կիրառվում են տեղավորման որոշումներ կայացնելու համար և այդ մեթոդները կարող են նահանգից-նահանգ և դպրոցից-դպրոց տարբեր լինել: Այս գործողության ընթացքում, ծնողները կարող են և պետք է մասնակցեն ու օգնեն դպրոցներին:

Հանաչում

[17]

Որոշ կրթաշրջաններ, ինքնաբերաբար ստուգում են բոլոր նոր աշակերտների լեզվական հմտությունները, մինչ այլ կրթաշրջաններ, աշակերտներին տեղավորում են դասարաններում և սպասում են մինչև ուսուցիչը կամ մեկ ուրիշը կհայտնաբերի, որ աշակերտը սահմանափակ անգլերեն իմացող է: Շատ կրթաշրջաններ, արձանագրության ժամանակ, մայրենի լեզվի հարցախույզ են լրացնում:

Մայրենի լեզվի հարցախույզը սովորաբար պարունակում է հետևյալ չորս հարցերը՝

- ◆ Ի՞նչ լեզվով է ձեր երեխան խոսել սկսել:
- ◆ Սովորաբար ի՞նչ լեզվով եք տանը խոսում:
- ◆ Սովորաբար ի՞նչ լեզվով եք դուրս խոսում ձեր երեխայի հետ:
- ◆ Տան չափահասները հաճախ ի՞նչ լեզվով են խոսում:

Եթե այս հարցերից որևէ մեկի պատասխանը անգլերեն չէ (մեկ այլ լեզու է), սովորաբար անգլերեն լեզվի իմացության ֆննություն է կատարվում: Երեխայի տարիքից ելնելով ֆննությունը կարող է միայն բանավոր կամ գրավոր լինել:



Հավելյալ օգնություն



Հավելյալ օգնություն

Գնահատում

Կրթաշրջաններից շատերը, աշակերտների լեզվի կամ ուսումնական հմտությունների մասին տեղեկությունները ստանում են հետևյալ մեկ կամ մի քանի աղբյուրներից՝

- ◆ Ծնողներից, հաճախ արձանագրության ժամանակ կատարվող մայրենի լեզվի հարցախույզի տվյալներից:
- ◆ Ուսուցիչներից
- ◆ Նախորդ դպրոցի արձանագրություններից
- ◆ Աշակերտի ընդհանուր ուսումնական մակարդակի գնահատման արդյունքներից, և
- ◆ Լեզվի իմացության ֆննդության արդյունքներից:

[18]

Տարբեր տեսակի ֆննդություններ են օգտագործվում աշակերտների անգլերեն լեզվի իմացության մակարդակը, որոնց մայրենի լեզուն անգլերենն է, որոշելու համար: Հնարավորին չափ ճշգրիտ լինելու համար, ֆննդությունը պետք է ստուգի լեզվի օգտագործման բոլոր ձևերը, ներառյալ ընկալումը, կարդալը, խոսելը և գրելը: Լեզվի իմացության մակարդակը չի կարելի միայն խոսելու հմտության կամ անգլերենի իմացության միայն որևէ մեկ տեսակի ֆննդության արդյունքների վրա հիմնվելով որոշել:

Ձեր դերը

Դպրոցը պետք է ձեզ հայտնի ֆննդության արդյունքները և ասի թե որ ծրագրում է տեղավորելու ձեր երեխային: Եթե հավատացած եք, որ ձեր երեխան պետք է մեկ այլ ծրագրում լինի, դուք ձեր երեխայի ծրագիրը փոխելու և համապատասխան ծրագրում տեղավորելու խնդիրը ֆննդարկելու իրավունք ունեք: Երկրի տարբեր մասերում կիրառվող գործընթացները տարբեր են, բայց մեծ թվով նահանգներում «հրաժարագիրը» օգտագործվում է, երեխաներին որևէ ծրագրից կամ ծառայությունից հանելու միջոց: Այնուհետև երեխային մեկ այլ ծրագրում կտեղավորեն: Կարևորն այն է, որ ձեր երեխան այնպիսի ծրագրում լինի, որտեղ կսովորի թե ուսումնական առարկաները և թե անգլերեն լեզուն և ձեր երեխայի առաջադիմությունը շարունակաբար կստուգվի:



Ծ առ ա յ ու թ յ ու ն ն ք

Դպրոցներն ի՞նչ ծառայություններ են տրամադրում անգլերեն լեզու սովորող աշակերտներին:

Երկրի կրթաշրջանները անգլերեն լեզու սովորող աշակերտներին դասավանդելու տարբեր մոտեցումներ կամ ծրագրեր ունեն, հետևյալ գործոններից ելնելով՝

- ◆ մահանգային կանոններն ու ուղեցույցները
- ◆ համայնքի ցանկությունը
- ◆ սվյալ լեզվով խոսող աշակերտների թիվը
- ◆ աշակերտի լեզվով դասավանդող որակյալ ուսուցիչների թիվը
- ◆ համապատասխան նյութերի մատչելիությունը:

[19] Գանի որ դասարանում օգտագործվող անգլերեն լեզուն սովորելու համար ժամանակ է հարկավոր, ուստի LEP աշակերտների ուսումնական ձեռքբերումները բարելավելու համար ամենալավ ծրագիրն այն է, որ նոր լեզուն սովորելու հետ համատեղ աշակերտներին հնարավորություն է տալիս զարգացնելու իրենց ուսումնական հմտությունները: Այս ծրագրերը հիմնվում են աշակերտների ունեցած գիտելիքների և հմտությունների վրա և միավորում են նրանց լեզվական և մշակութային կարիքները: Որպես արդյունք, անգլերեն լեզու սովորելու ընթացքում աշակերտները ետ չեն մնում ուսումնական մյուս առարկաներից:

Անգլերեն սահմանափակ իմացությամբ աշակերտների ծրագրերը կարող են տարբերվել՝ 1) դասարանի աշակերտների մայրենի լեզվով, 2) ուսումնական առարկաների դասավանդման համար օգտագործվող լեզվով, 3) լեզվի ուսուցմամբ և 4) ծրագրի նպատակով: Խնդրվում է նկատի ունենալ, որ յուրաքանչյուր նպատակ պետք է կրթաշրջանի LEP աշակերտության որոշակի կարիքներին համապատասխան վերամշակել. հետևաբար ոչ մի ծրագիր չի կարող միշտ և բոլոր պայմաններում լավագույնը լինել: Հետևյալ աղյուսակում նշվում են ծրագրերը, իրենց ընդունված անուններով և այդ ծրագրերի յուրահատկությունների համեմատությունները:

LEP աշակերտների արդյունավետ ուսումնառության և յուրաքանչյուր ծրագրի յուրահատկություններն իմանալով դուր կարող եմ լավագույն ուսումնական ծրագիրն ընտրել ձեր երեխայի համար: Դուր պետք է հարցնեմ թե ձեր երեխայի դպրոցն ինչ ծրագրեր ունի: Եթե ձեր կրթաշրջանը մեկից ավելի ծրագրեր ունի, ձեր դպրոցը տարբեր ծրագրերի ընտրության մասին պետք է տեղեկություններ հաղորդի ձեզ: Վերջնական որոշումը դուր պետք է



կայացնեմ:

LEP աշակերտների համար նախատեսված ծրագրերի յուրահատկությունները

Դասավանդման լեզու(ներ)	Բնորոշ ծրագրի անուններ	LEP աշակերտների մայրենի լեզու
<p>Անգլերեն և մայրենի լեզու</p>	<ul style="list-style-type: none"> • Երկ-կողմանի երկլեզվյան կրթություն • Bilingual Immersion, կամ • Dual Language Immersion • Late-exit կամ • Developmental Bilingual Education • Early-exit կամ • Transitional Bilingual Education 	<p>Իդեալականորեն, 50 տոկոս անգլիախոս և 50 տոկոս LEP աշակերտները նույն մայրենի լեզուն ունեն:</p> <p>Բոլոր աշակերտների մայրենի լեզուն նույնն է:</p> <p>Բոլոր աշակերտների մայրենի լեզուն նույնն է:</p>
<p>Անգլերեն</p>	<ul style="list-style-type: none"> • Sheltered English, • Structured Immersion, կամ • Content-based ESL • Pull-out ESL 	<p>Աշակերտների մայրենի լեզուն կարող է նույնը կամ տարբեր լինել:</p> <p>Աշակերտների մայրենի լեզուն կարող է նույնը կամ տարբեր լինել: Տարբեր տարիքի աշակերտները կարող են նույն դասարանային մակարդակում լինել:</p>

If Your Child Learns in Two Languages [Armenian]
 Translation provided by GUSD Intercultural Department (April 2007)

	Դասավանդման լեզու(ներ)	Լեզվի դասավանդում	Ծրագրի լեզվական նպատակը
	<p>Թե անգլերեն և թե մայրենի լեզու</p> <p>Երկու լեզվով, նախ մեծամասնությամբ մայրենի լեզուն է օգտագործվում: Աշակերտի անգլերեն լեզվի հմտության զարգացման հետ միասին մեծանում է անգլերեն լեզվով դասավանդումը:</p> <p>Սկզբում երկու լեզվով, այնուհետև, արագ առաջադիմությամբ, մեծ մասամբ անգլերենով</p>	<p>Անգլերեն և մայրենի լեզու</p> <p>Անգլերեն և մայրենի լեզու</p> <p>Անգլերեն. զարգանում է մայրենի լեզվի հմտությունները անգլերեն լեզվի տիրապետմանը նպաստելու համար</p>	<p>Երկլեզվություն</p> <p>Երկլեզվություն</p> <p>Անգլերենի տիրապետում, արագ անցում միայն անգլերենով դասավանդվող դասարան:</p>
	<p>Անգլերենը հարմարեցվում է աշակերտի իմացության մակարդակին, և լրացվում միմիկայով և դիդակտիկ նյութերով:</p> <p>Անգլերենը հարմարեցվում է աշակերտի իմացության մակարդակին, և լրացվում միմիկայով և դիդակտիկ նյութերով:</p>	<p>Անգլերեն</p> <p>Անգլերեն. միայն անգլերենով դասավանդվող դասարանի աշակերտները օրվա մի մասը ESL դասարան են գնում:</p>	<p>Անգլերեն լեզվի տիրապետում:</p> <p>Անգլերեն լեզվի տիրապետում:</p>



Պ ա հ ա ն ջ ն եր

Արդյո՞ք անգլերեն սովորող և անգլիախոս աշակերտներից ակնկալվող ուսումնական պահանջները նո^րւյնն են:

Բոլոր աշակերտներից, ներառյալ անգլերեն լեզու սովորող աշակերտներից նույն ուսումնական բարձր չափանիշներն են ակնկալվում: «Չափանիշ» թերմինը նշանակում է այն ամենը, որ աշակերտները պետք է իմանան և կարողանան անել դասարանի մակարդակով ուսումնական բոլոր առարկաներում (օրինակ՝ մաթեմատիկա, գիտություն, անգլերեն, հասարակական գիտելիքներ, արվեստ և օտար լեզուներ): Շրջանային կրթաշրջաններն ու նահանգներն են սահմանում այս չափանիշները: Այս չափանիշները ձեր երեխայի ուսուցման ուղեցույցն են հանդիսանում ամբողջ ուսումնական տարվա ընթացքում, անկախ այն բանից թե ով է պահանջում այս չափանիշները՝ նահանգը, կրթաշրջանը թե դպրոցը: Ահա կարևոր տեղեկություններ չափանիշների մասին՝

[23]

- ◆ Դուք իրավունք ունեք ձեր երեխայից պահանջվող չափանիշների և իր գիտելիքներն ու հմտությունները գնահատելու միջոցների մասին ամբողջական տեղեկություն պահանջել:
- ◆ Չափանիշների միջոցով դուք կարող եք համոզվել, որ դպրոցը ձեր երեխայի համար է աշխատում: Չափանիշների շնորհիվ ուսուցիչները գիտեն թե ինչ պետք է դասավանդեն և աշակերտներն ու ծնողները գիտեն թե աշակերտներն ինչ պետք է սովորեն:
- ◆ Յուրաքանչյուր դասարանային մակարդակի համար մի շարք չափանիշեր կան, որ աշակերտները պետք է բավարարեն և այդ գիտելիքները ձեր երեխային սովորեցնելը ուսուցչի պարտականությունն է:

Դպրոցի այցելության և ծնողական ժողովի ժամանակ, ձեր երեխայի ուսուցիչը պետք է ձեզ հայտնի այդ չափանիշների մասին: Եթե ուսուցիչն այդ չափանիշների մասին չի հաղորդում կամ ձեզ հետ չի ֆննդարկում այն որոշակի հմտությունները, որոնց ձեր երեխան պետք է տիրապետի, դուք ուսուցչից պահանջեք այն չափանիշների ցանկը, որոնց ձեր երեխան պետք է տիրապետի



Պահանջներ

[24]

ուսումնական տարվա ընթացքում: Այս չափանիշերի մասին իմանալով, դուք կարող եք օգնել ձեր երեխայի դպրոցական հաջողությանը: Դուք կարող եք ստուգել ձեր երեխայի տնային և դասարանային աշխատանքները՝ տեսնելու թե ինչքանով է տիրապետում պահաջվող չափանիշերին և տանը աշխատել նրա հմտությունների վրա: Օրինակ՝ «Աշակերտները պետք է գնահատեն և գրեն այբուբենի տառերը» չափանիշերի համար, դուք կարող եք այբուբենի երգը միասին երգելով, ցուցատախտակների, անունների կամ խանութում ապրանքների վրա գրված տառերը կարդալով օգնել ձեր երեխային, որ կարդա ու գրի տառերը:

Գնահատում

Չափանիշերի ձեռք բերման ուղղությամբ, ձեր երեխան կստուգվի տարվա ընթացքում: Դպրոցը կարող է ֆնկցիոններ կամ գնահատման այլ մեթոդներ օգտագործելով կամ աշակերտի աշխատանքները ստուգելով գնահատել աշակերտին: Դուք կարող եք և պետք է իմանաք ձեր երեխային տրվող ֆնկցիոնների մասին: Դուք կարող եք ձեր երեխայի ուսուցչի հետ ֆնկցիոնները թե չափանիշերի վրա հիմնված գիտելիքները և հմտությունները ինչպես են գնահատվելու և այդ գնահատված աշխատանքները ինչպես են ստուգվելու տանը:


Անին հինգ ծաղիկ ունի և յուրաքանչյուր ծաղիկ վեց ծաղկաթերթիկ ունի:
Բռլոքը միասին ֆանի՞ ծաղկաթերթիկ ունեն: Արդյոք այս երրորդ դասարանի խնդիրը իսկապես գնահատում է աշակերտի բազմապատկման հմտությունը: Անգլերեն «ծաղիկ» և «ծաղկաթերթիկ» բառերը չիմացող աշակերտի համար, այս հարցը գնահատում է նրա անգլերեն կարդալու և հասկանալու հմտությունը:

[25]

Շատ նահանգներում, միջնակարգ դպրոցն ավարտելու կամ հաջորդ դասարան փոխադրվելու համար աշակերտներից պահանջվում է ֆննություն հանձնել: Այս ֆննությունները շատ կարևոր են համարվում նրանց ունեցած հետևանքների պատճառով: Յուրաքանչյուր նահանգում այս պահանջները և հետևանքները տարբեր են լինում, բայց հաճախ, աշակերտները չեն կարող միջնակարգ դպրոցի դիպլոմ ստանալ կամ հաջորդ դասարան փոխադրվել, եթե այս ֆննությունները հաջողությամբ չհանձնեն: Որոշ նահանգներ LEP աշակերտներին կամ որոշակի քանակով ԱՄՆ-ի դպրոց չհաճախած աշակերտներին բացառում են այս ֆննություններից կամ հետաձգում են ֆննությունները: Մյուս նահանգները հարմարություններ են ստեղծում, ինչպես օրինակ՝ երկլեզվյան բառարաններից օգտվել, հարցերը ուսուցիչներն են կարդում աշակերտների համար, ավելի երկար ժամանակ է տրամադրվում LEP աշակերտներին: Ձեր երեխայի դպրոցը ձեզ պետք է հայտնի այս ֆննությունների բովանդակության և հետևանքների, ինչպես նաև ձեր երեխային տրամադրվող հարմարությունների մասին:

Միացյալ նահանգների բոլոր աշակերտներից, ներառյալ անգլերեն լեզու սովորող աշակերտներից բարձր չափանիշեր են ակնկալվում: Այնուամենայնիվ, դժվար է գնահատել LEP աշակերտների գիտելիքները և հմտությունները, անգլերեն լեզվով կատարվող ֆննության միջոցով: Երկրի, նահանգի և շրջանի ուսուցիչները հասկանում են այս խնդիրը և աշխատում են գնահատման այնպիսի ձև ստեղծել, որը միշտ ձևով կգնահատի աշակերտների ունակությունները, նկատի առնելով նրանց անգլերեն լեզու սովորող լինելու փաստը:



 ա հ ա ն ջ ն ե ր

Դպրոցում իրենց երեխաներին տրամադրվող ուսման որակը հսկելու համար ծնողներին օգնող դաշնակցային կանոններ կան:

Միացյալ Լեհանգներում, բոլոր երեխաները դպրոց գնալու և որակյալ կրթություն ստանալու իրավունք ունեն: Դպրոցների պարտականությունն է որակյալ կրթության հավասար հնարավորություն ապահովել բոլոր աշակերտների, ներառյալ անգլերեն սովորող աշակերտների համար: Դաշնակցային կառավարությունը, անգլերեն սովորող աշակերտների դասավանդման համար որևէ առանձնակի մոտեցում չի պարտադրում: Այնուամենայնիվ, ֆաղափացիական տարրեր օրենքները և դատական որոշումները հայտնում են, որ դպրոցները պետք է որոշ տեսակի օգնություն տրամադրեն անգլերեն սովորող աշակերտներին, որպեսզի կարողանան լեզուն սովորելու ընթացքում, ուսումնական մյուս առարկաները և սովորել:

[27]

1970 թվականին, ֆաղափացիական իրավունքների դաշնակցային գրասենյակը, ֆաղափացիական իրավունքների օրենքով, դպրոցների կրթաշրջանների անգլերեն լեզու սովորող աշակերտներին ուսումնական հավասար հնարավորություն տրամադրելու պատասխանատվության վերաբերյալ մի շրջաբերական հրատարակեց: Այս շրջաբերականում նշվում է՝

Երբ անգլերեն լեզվով խոսելու և հասկանալու անկարողության պատճառով, ազգային փոփոխմանություն կազմող խմբերի երեխաները չեն կարողանում արդյունավետ կերպով մասնակցել կրթաշրջանի կողմից տրամադրվող ուսումնական ծրագրին, ապա կրթաշրջանը հաստատուն ֆայլերի միջոցով պետք է աշխատի վերացնել այդ պակասը, որպեսզի այս աշակերտներն ուսումնական ծրագրերից օգտվելու հնարավորություն ունենան:

1974 թվականին, գերագույն դատարանը կանոն սահմանեց, Lau v. Nichols դատական գործի հիման վրա, որը ներկայացվել էր ի օգուտ Սան Ֆրանսիսկոյի դպրոցները հանախող 1,700 չինացի աշակերտների: Հայցում ներկայացված էր, որ աշակերտները չեն հասկանում դասավանդման լեզուն, ուստի նրանց հավասար կրթություն չէր տրամադրվում: Միացյալ Լեհանգների գերագույն դատարանը համաձայնեց, ասելով՝

Նույն հարմարությունները, դասագրքերը, ուսուցիչները և ծրագրերը տրամադրելը հավասարություն չի համարվում, քանի որ անգլերեն լեզուն լավ չհասկացող աշակերտները գրկվում են իմաստալից կրթություն ստանալուց:



Կանոններ



Կանոններ

Այս փաստը հաստատում է, որ Միացյալ նահանգներում, բոլոր աշակերտները, անկախ նրանց լեզվից, հավասար կրթություն ստանալու իրավունք ունեն: Երբ դատարանը խոսում է հավասար կրթություն տրամադրելու մասին, ի նկատի չունի, որ բոլոր աշակերտները նույն կրթության կարիք ունեն, այլ կրթություն ստանալու նույն հնարավորությունը: Աշակերտները միայն ուսուցման լեզուն հասկանալով կարող են կրթություն ստանալ:

Միացյալ նահանգների լուսավորության նախարարության ֆողաֆացիական իրավունքների գրասենյակը մի շարք միջոցներ է առաջարկում կրթաշրջաններին, որպեսզի համոզված լինեն, որ բոլոր աշակերտներին տրամադրվում է հավասար և որակյալ կրթություն:

1. Կրթաշրջանները պետք է իմանան թե ֆանի անգլերեն սովորող աշակերտ կան իրենց դպրոցներում: Ձեր երեխաների դպրոցների կրթաշրջանը LEP աշակերտներին որոշելու համակարգ պետք է ունենա: Երբ որոշվի թե ֆանի LEP աշակերտ և ֆանի լեզու է խոսվում կրթաշրջանում, այն ժամանակ պետք է որոշի կիրառվող ծրագիրը:

2. Կրթաշրջանը պետք է վստահ լինի, որ բոլոր LEP աշակերտներին անգլերեն կարդալ, գրել, խոսել և հասկանալ է դասավանդվում:

3. Եթե աշակերտն անգլերեն լեզուն սահուն կերպով չի խոսում, կարդում, գրում և հասկանում, ապա անգլերեն լեզվով հանձնած ֆննդությունները չեն կարող ճշգրիտ կերպով ցույց տալ նրա ունակություններն ու գիտելիքները: Ավելին, կրթաշրջանները պետք է համոզված լինեն, որ անգլերեն լեզու չիմանալու պատճառով, այս աշակերտներին մտավոր ետամնացների դասարան չուղարկվեն: Այսպիսի դեպքերից խուսափելու համար, կրթաշրջանները պետք է այս աշակերտների գիտելիքները մայրենի լեզվով ստուգեն, նրանց անկարողությունը որոշելու համար:

4. Կրթաշրջանների պարտականությունն է ծնողներին դպրոցի աշխատանքների մասին տեղյակ պահել: Անգլերեն լեզու սովորողների ծնողներին ներգրավելու համար, տեղեկությունները պետք է լինեն նրանց հասկանալի լեզվով:

Ի՞նչ տարբերություն գոյություն ունի ԱՄՆ-ի և մյուս երկրների ուսումնական համակարգում:

Շատ երկրներում կենտրոնական կառավարությունն է հաստատում ազգային կրթության համակարգը և սահմանում կրթական բոլոր օրենքներն ու կանոնները: Այնուամենայնիվ, Միացյալ Նահանգներում, յուրաքանչյուր նահանգ տեղական համայնքի հետ միասին հաստատում և իրագործում է իր կրթական կանոնները: Սա նշանակում է, որ Միացյալ Նահանգներում, ծնողներն իրենց երեխաների կրթության մեջ կարևոր դեր են ստանձնում՝ դպրոցի դասավանդման մասին որոշումներ կայացնելու իրավունք ունենալով: Նրանք կարող են որոշել թե՛ դպրոցը ինչպես պետք է դասավանդի իրենց երեխաներին: Սա նաև նշանակում է, որ ծնողները պետք է ակտիվորեն մասնակցեն իրենց երեխաների կրթության աշխատանքներին: Համայնքային մակարդակով, դպրոցը ղեկավարում է կրթական մարմինը, որի անդամներն ընտրվել են քաղաքացիների կամ նշանակվել են քաղաքի շրջանային ղեկավարության կողմից: Ուսումնական խորհուրդն ընտրում է ծրագիրը և դասագրքերը, մինչ կրթաշրջանը և դպրոցները աշխատանքի են ընդունում ուսուցիչներին և դպրոցական անձնակազմին: Յուրաքանչյուր կրթաշրջան, իր հերթին, պատասխանատու է նահանգի լուսավորության նախարարությանը:

[29]

Դաշնակցային կառավարությունը կրթության համար ոչ թե կանոններ և ծրագիր, այլ ուղեցույց և աղբյուրներ է տրամադում: Դաշնակցային կառավարությունը, միջին հաշվով միայն դպրոցական ֆոնդի 7 տոկոսն է վճարում: Ֆոնդի մնացած մասը և բոլոր որոշումները նահանգային կամ շրջանային մակարդակով է կատարվում: Սա նշանակում է, որ յուրաքանչյուր անհատ կարող է մասնակցել իր համայնքի կրթական համակարգի կառուցմանը: Կրթաշրջանները կամ դպրոցները պետք է անդրադառնան ձեր հարցերին կամ մտահոգություններին, որովհետև ձեր երեխայի կրթության վերաբերյալ որոշումները շրջանային մակարդակով են կատարվում: Դպրոցական համակարգը հասկանալի շատ կարևոր է, որովհետև դուք ձեր երեխայի կրթական աշխատանքների վրա ազդելու և մասնակցելու պարտականություն ունեք:

Միացյալ նահանգներում, ծնողները և դպրոցները գործակիցներ են համարվում երեխայի կրթության բնագավառում և ծնողներից ակնկալվում է



Համակարգեր

մասնակցել դպրոցական աշխատանքներին և դպրոցները պետք է ներգրավեն ծնողներին և աշխատեն նրանց հետ: Ձեր երեխայի կրթության աշխատանքներում ներգրավվելը ձեր իրավունքն է, իրականում ձեր պարտականությունը:

- ◆ Իմանալ թե ինչպես են ընթանում դպրոցի աշխատանքները
- ◆ Իմանալ թե դպրոցն ինչպես է ծառայում ձեր երեխային, և
- ◆ Վստահանալ, որ դպրոցը պատշաճորեն է բավարարում ձեր երեխայի կրթական կարիքները:

[30]



Համակարգեր



Ա դրյուրներ

Որտե՞ղից կարող եմ լրացուցիչ տեղեկություններ ձեռք բերել:

America Reads

(202) 401-8888 (հեռախոս)

(202) 260-8114 (ֆաքս)

<http://www.ed.gov/inits/americanreads/readnow.html>

Որպես ԱՄՆ-ի լուսավորության նախարարության *Ամերիկայի կարդալու մարտահրավերի* մի մաս, այս կայքէջը գրագիտության բազմաթիվ աշխատանքներ ունի, որ ընտանիքի անդամները կարող են միասին կատարել:

Center for Applied Linguistics (CAL)

4646 40th Street. NW

[31] Washington, DC 20016-1859

(202) 362-0700 (հեռախոս)

(202) 362-3740 (ֆաքս)

<http://www.cal.org>

CAL-ը ձգտում է օգնել և բարելավել լեզուների դասավանդումն ու ուսումնառությունը, ցանաչել և լուծել լեզվի և մշակույթի հետ առնչվող խնդիրները և լեզվի ու մշակույթի մասին տեղեկությունների աղբյուր հանդիսանալ: CAL-ը բազմատեսակ վարժություններ ունի, ներառյալ հետազոտություններ, ուսուցչի կրթություն, տեղեկությունների վերլուծություն և տարածում, ուսուցման նյութերի ձևավորում և ստեղծում, ծրագրի գնահատում և կանոնների վերլուծություն:

The Educational Resources Information Center (ERIC)

<http://www.accesseric.org/resources/parent/parent.html>

ERIC-ը տարբեր թեմաներով՝ կուլեջի ծրագրավորում, մասնավոր դպրոցների և ստանդարտացված ֆննությունների մասին, բազմաթիվ բրոշյուրներ ունի: Բոլոր հրատարակությունները կարող եմ ձեռք բերել կայքէջի միջոցով կամ 1-800-LET-ERIC (538-3742) հեռախոսահամարով:



Աղբյուրներ

[32]

Intercultural Development Research Association (IDRA)

5835 Callaghan Road, Suite 350
San Antonio, Texas 78228-1190
(210) 444-1710 (հեռախոս)
(210) 444-1714 (ֆաքս)
<http://www.idra.org>

IDRA-ը յուրաքանչյուր աշակերտի կրթություն ստանալու հավասար հնարավորություն ունենալու իրավունքի պաշտպանն է: IDRA-ը իր առաջադրանքը իրագործում է մասնագիտական վերապատրաստման, հետազոտությունների և գնահատումների, կանոնների և ղեկավարության ստեղծման, ծրագրերի և նյութերի ստեղծման միջոցով: IDRA-ը դպրոցներին տրամադրում է LEP աշակերտների ուսումնական կարիքները բավարարելու համար անհրաժեշտ միջոցներ, դպրոցների ծրագրերի, ուսումնական ստրատեգիաների, նյութերի ձեռք բերման և գնահատման մեթոդների ուղղությամբ արդյունավետ պատրաստման և տեխնիկական օգնության միջոցով:

National Association for Bilingual Education (NABE)

1030 15th Street, NW, Suite 470
Washington, DC 20005-1503
(202) 898-1829 (հեռախոս)
(202) 789-2866 (ֆաքս)
<http://www.nabe.org>

Սա ազգային մի կազմակերպություն է, որը միայն փոփոխման ուղիների աշակերտների կրթության կանոններով և աշխատանքներով է զբաղվում: Կազմակերպությանն անդամակցում են մանկավարժները, ծնողները, համայնքի անդամները և համայնքի, կառավարության ու առևտրական կազմակերպությունների ղեկավարները: Բացի դրանից, NABE-ը ազգային, մահանգային և շրջանային մակարդակով պաշտպան է հանդիսանում երկլեզվյան կրթությանը:

National Clearinghouse for Bilingual Education (NCBE)

2011 Eye Street, NW, Suite 200
Washington, DC 20006
(202) 467-0867 (հեռախոս)
(202) 467-4283 (ֆաքս)
<http://www.ncbe.gwu.edu>



Աղբյուրներ

[33]

ԱՄՆ-ի լուսավորության միջազգային գրասենյակի երկլեզվյան կրթության և բնակչության փոփոխման լեզուների գործերի բաժնի միջոցով ֆինանսավորված այս կազմակերպությունը միացյալ նահանգներում տարբեր լեզու և մշակույթ ունեցող աշակերտների արդյունավետ կրթության վերաբերյալ տեղեկություններ է հավաքում: Նրանց կայքէջը էլեկտրոնային բնագավառում խումբ ունի, շարաքը երկու անգամ հրատարակվող լրագիր, հանախակի տրվող հարցեր, ԱՄՆ-ում խոսվող տարբեր լեզուներով աղբյուրներ: Բացի դրանից, NCBE-ի կայքէջը կապվում է յուրաքանչյուր նահանգի լուսավորության միջազգային հետ:

The National Parent Teacher Association (PTA)

330 N. Wabash Avenue, Suite 2100
Chicago, IL 60611
(800) 307-4PTA (հեռախոս)
(312) 670-6783 (ֆաքս)
<http://www.pta.org>

Այս կազմակերպությունն աշխատում է համագործակցություն ստեղծել ծնողների և ուսուցիչների միջև, օգնելու և աշակերտների շահերը պաշտպանելու դպրոցում, համայնքում և աշակերտների վրա ազդող որոշում կայացնող կառավարական օրգաններում և այլ կազմակերպություններում: PTA-ը մեկ ծնողներին սովորեցնում է երեխաներին դաստիարակելու և պաշտպանելու անհրաժեշտ հմտություններ և խրախուսում է, որ ավելի շատ ներգրավված լինել հանրային դպրոցների աշխատանքներում:

Office of Civil Rights, U.S. Department of Education (OCR)

(202) 205-5557 (հեռախոս)
(202) 205-9862 (ֆաքս)
<http://www.ed.gov/offices/OCR>

OCR-ի աշխատանքն է ֆաղափարակալան իրավունքների իրագործման միջոցով կրթությունը հավասարապես մատչելի դարձնել բոլոր աշակերտների համար և բարձրացնել ուսման մակարդակը: Հիմնական պատասխանատվությունը խտրականությանը վերաբերող գանգատների լուծումն է: OCR-ը օգնություն, ուղղեցույց և տեղեկություններ է տրամադրում աշակերտներին, ծնողներին և մանկավարժներին: Խտրականության վերաբերյալ գանգատ կարող են ներկայացնել բոլոր այն անհատները, ովքեր հավատացած են, որ ազգի, գույնի, ազգային պատկանելության, սեռի, անկարողության կամ տարիքի պատճառով խտրականության են ենթարկվել:



Ա դրյուրներ

**Partnership for Family Involvement in Education,
U.S. Department of Education (PFIE)**

(202) 401-0056 (հեռախոս)
(202) 205-9133 (ֆաքս)
<http://www.pfie.ed.gov>

Որպես ԱՄՆ-ի լուսավորության նախարարության մի բաժին, PFIE-ի պարտականությունն է ընդարձակել ընտանիքների հնարավորությունները երեխաների ուսմանը ներգրավվելու համար թե՛ տանը և թե՛ դպրոցում և օգտագործել ընտանիք-դպրոց-համայնք համագործակցությունը՝ դպրոցն ու աշակերտներին ձեռքբերումները բարելավելու համար:

[34]

The Public Education Network (PEN)

601 13th Street, NW, Suite 900 North
Washington, DC 2005
(202) 628-7460 (հեռախոս)
(202) 628-1893 (ֆաքս)
<http://www.publiceducation.org>

PEN-ը դպրոցական բարեփոխության երկրի ամենամեծ համայնքային ինֆորմայն կազմակերպությունների ցանց է, որ աշխատում է շրջանային կրթության տրամադրած ֆոնդով: Նրանք աշակերտների ձեռքբերումների վրա ազդող խնդիրների վերաբերյալ տեղեկություն ստանալու աղբյուրների մի ցանկ են տրամադրում:

The Southeast Asian Culture and Education Foundation (SEACAEF)

17212 Blue Fox Circle
Huntington Beach, CA 92647
(714) 842-7589 (հեռախոս)
(714) 847-4009 (ֆաքս)
<http://www.seacaef.org>

SEACAEF-ի նպատակն է բարձրացնել հարավարևելյան ասիացի ամերիկացիների և այլ ծագում ունեցող ամերիկացիների փոխըմբռնումը: Այս կազմակերպությունը հարավարևելյան ասիայի, ներառյալ Վիետնամի,

Կամբոդիայի, Հնդկաստանի և Լատին Ամերիկայի լեզուների և մշակույթի վերաբերյալ գրավոր նյութեր է հրատարակում: Դա օգնում է հարավարևելյան ասիացի նոր գաղթականներին նոր երկրի մշակույթը սովորելու, պատասխանատու ու օգտակար քաղաքացիներ դառնալու ուղղությամբ:

Teachers of English to Speakers of Other Languages (TESOL)

700 Wahington Street, Suite 200
Alexandra, VA 22314
(703) 836-0774 (հեռախոս)
(703) 836-7864 կամ (703) 836-6447 (ֆաքս)
<http://www.tesol.org>

[35]

TESOL-ի պարտականությունն է մասնագիտական նախապատրաստություն ապահովել իր ավելի քան 16,000 անդամների և այլ լեզուներով խոսող երեխաների ուսման մեջ ներգրավված այլ անհատների համար, որպեսզի օգնեն աշակերտներին՝ իրենց մայրենի լեզուն պահպանելով, բազմամշակութային միջավայրում արդյունավետ կերպով հաղորդվել սովորել: TESOL-ը մասնագիտական նախապատրաստության և աշխատանքի, կրթության շարունակման և աշակերտական ծրագրերի չափանիշներ է առաջադրում և գարգացնում: Բացի դրանից, TESOL-ը պաշտպանում է այլ լեզուներով խոսող աշակերտներին անգլերեն դասավանդելու մասնագիտությունը:

United States Department of Education

400 Maryland Avenue, SW
Washington, DC 20202
1-800 USA-LEARN (հեռախոս)
(202) 401-0689 (ֆաքս)
<http://www.ed.gov>

ԱՄՆ-ի լուսավորության նախարարությունը բազմաթիվ հրատարակություններ է տրամադրում ծնողներին, ներառյալ *ձեր երեխայի ուղեղի զարգացումը, առաջին հինգ տարիների ուղեցույց ծնողների համար, ուղեցույց ինտերնետի վերաբերյալ ծնողների համար, ուսման գործակիցներ՝ տնային աշխատանք կատարել, ինչպես քննադատության զերծ երեխաներ մեծացնել, երեխային ընթերցող դառննել, օգնել երեխայի դպրոցական հաջողություններին, օգնել երեխային, որ մաթեմատիկա սովորի*: Այս հրատարակություններից շատերը թարգմանված են իսպաներեն լեզվով, անվճար են և կարելի է պատվիրել կայքէջի միջոցով կամ գնագել 1-877-4-ED-PUBS հառախոսահամարով:



Աղբյուրներ

ԱՄՆ-ի լուսավորության նախարարության գրասենյակի երկլեզվյան կրթության և
բնակչության փոփոխման լեզուների գործերի բաժինը ֆինանսավորում է
երկլեզվյան կրթության կենտրոնական գրասենյակին, որպեսզի ԱՄՆ-ում սովորող
այլ լեզվի և մշակույթի աշակերտների արդյունավետ կրթությանը վերաբերող
տեղեկություններ ձեռք բերի, վերլուծի և տարածի:



Երկլեզվյան կրթության կենտրոնական գրասենյակ
Ջորջ Վաշինգտոն համալսարանի լեզուների և կրթության ուսումնասիրության կենտրոն
2011 Eye Street, NW
Washington, DC 20006
(202) 467-0867
www.ncbe.gwu.edu